

ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԵՂԻ ԼԻՊԻԴՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԵՄԲՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՉԱՏ ՌԱԴԻԿԱԼՆԵՐԻ ՕՔՍԻԴԱՑՈՒՄԸ MACROVIPERA LEBETINA OBTUSA ԹՈՒՅՆԻ ՀԵՏ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այվազյան Ն.Մ.¹, Չաբարյան Ա.Ե.², Ղազարյան Ն.Ա.¹.

¹ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Երևան, Հայաստան
²Երևանի պետ. բժշկական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոն, Երևան, Հայաստան

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել *Macrovipera lebetina obtusa* թուլնի հակաօքսիդանտային ազդեցությունը տարբեր ողնաշարավորների ուղեղի լիպիդների վրա, ինչպես նաև ցույց տալ, թե ինչպես են փոխվում նատիվ լիպիդների մոդելային թաղանթների պլաստիկ հատկությունները թուլնով մշակման ժամանակ: Ազատ ռադիկալային մեխանիզմով ընթացող գործընթացների ուսումնասիրման համար ընտրվել են քիմյունոմինեցենտային անալիզի և մալոնային երկալդեհիդի սպեկտրոֆոտոմետրիկ որոշման մեթոդները: Ողնաշարավորների նյարդային հյուսվածքի քիմյունոմինեցենտային անալիզի տվյալները (համեմատած թիրբարբիտուրաթթվի թեստի հետ) ցույց են տալիս, որ թուլնը փոխազդում է նյարդային բջիջների մեմբրանների հետ, ինչի արդյունքում նկատվում է լիպիդային կառույցների գերօքսիդային օքսիդացման նվազում (կախված լիպիդների հագեցվածության աստիճանից): Ցույց է տրվել նաև, որ երկչերտ լիպիդային թաղանթների էլեկտրապորացիան և էլեկտրաթափանցելիությունը աճում են ավելի քան երկու անգամ 0.1 Մ KCl միջավայրում: Հետաքրքիր է, որ ցինկի իոնների ավելացումը բերում է փորձնական միջավայրում ինտոքսիկացիայի առաջացրած էֆեկտների նվազման՝ ի տարբերություն այլ երկվալենտ իոնների (Ca^{2+} , Mg^{2+}):